Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«ԲԻԴԵՔ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Երևան – 2023

«Բիդեք»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399-855

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ)

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու

կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

Աուդիտոր Ա.Ջատինյան

«14» հուլիսի 2023թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Բիդեք» ՍՊԸ

առ 31-ը դեկտեմբերի 2022թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2022 Դ 000	31/12/2021 Դ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	579,395	397,743
Ներդրումային գույք	7	118,200	129,475
Ոչ նյութական ակտիվներ		1,468	1,468
Տրված փոխառություններ	8	3,000	3,000
Հետաձգված հարկային ակտիվներ	27	12,106	4,332
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		714,169	536,017
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	5,444,224	3,259,671
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	824,249	683,219
Հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ	11	178,545	47,472
Տրված փոխառություններ և ավանդներ	8	2,095,273	2,504,273
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	4,754,850	4,187,146
Այլ հարկային ակտիվներ		8,534	3,547
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		13,305,675	10,685,327
Ընդամենը ակտիվներ		14,019,844	11,221,344
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	13		
Կանոնադրական կապիտալ		43,060	60
Չբաշխված շահույթ		42,593	841,919
Ընդամենը սեփական կապիտալ		85,653	841,979
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14	270,212	890,777
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	15	74,705	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		344,917	890,777
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14	2,341,080	1,731,251
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	15	31,503	21,073
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	11,148,000	7,654,401
Շահութահարկի գծով պարտավորություն		-	57,230
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորությունն	11	1,435	569
Ընթացիկ պահուստներ	17	67,256	24,065
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		13,589,274	9,488,588
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		14,019,844	11,221,344

10-ից 27-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Գ. Ավետիսյան

Փորձագետ հաշվապահ
Ն. Յախանեջյան

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Բիդեք» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2022 դ 000	2021 դ 000
Շարունակական գործունեություն			
Հասույթ	18	*4,566,804*	*2,748,995*
Ինքնարժեք	19	*(4,338,011)*	*(2,076,173)*
Համախառն շահույթ		228,793	672,822
Այլ եկամուտներ	20	*54,421*	*71,055*
Իրացման ծախսեր	21	*(6,092)*	*(5,018)*
Վարչական ծախսեր	22	*(230,293)*	*(129,680)*
Այլ ծախսեր	23	*(160,656)*	*(81,587)*
Գործառնական շահույթ (վնաս)		(113,827)	527,592
Ֆինանսական ծախսեր	24	*(205,767)*	*(223,882)*
Ֆինանսական եկամուտներ	25	*284,886*	*179,641*
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)	26	*82,827*	*58,058*
Շարունակական գործունեությունից շահույթ մինչև հարկումը		48,119	541,410
Ընդհատված գործունեություն			
Ընդհատված գործունեությունից շահույթ/վնաս		-	-
Շահութահարկի գծով ծախս	27	(5,545)	(82,696)
Տարվա շահույթ հարկումից հետո		42,574	458,714
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Սեփական կապիտալում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		42,574	458,714

10-ից 27-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Գ. Ավետիսյան

Փորձագետ հաշվապահ
Ն. Յախանեջյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Բիդեք» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Դ 000

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2020թ.	60	383,205	383,265
Տարվա շահույթ		458,714	458,714
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	60	841,919	841,979
Տարվա շահույթ		42,574	42,574
Շահաբաժիններ		(841,900)	(841,900)
Կանոնադրական կապիտալի համալրում	43,000		43,000
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	43,060	42,593	85,653

10-ից 27-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Գ. Ավետիսյան

Փորձագետ հաշվապահ
Ն. Յախանեջյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Բիդեք» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2022-31.12.2022	01.01.2021-31.12.2021
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	₽ 000	₽ 000
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	8,910,589	5,774,301
Վճարումներ մատակարարներին	(6,324,916)	(3,303,495)
Վճարումներ աշխատակիցներին	(618,836)	(283,485)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ, այդ թվում՝	(395,544)	(169,185)
Ռեզիդենտների շահութահարկ	(107,241)	(44,188)
Այլ մուտքեր	5,345	-
Այլ ելքեր	(131,260)	(103,891)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	1,445,378	1,914,245
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(285,351)	(87,779)
Ներդրված բանկային ավանդներ	-	(1,650,000)
Ներդրված ավանդների մարում	650,000	1,100,000
Տրամադրված փոխառություններ	(1,267,408)	(1,987,250)
Տրամադրված փոխառությունների մարում	1,026,408	136,567
Ստացված տոկոսներ	284,886	178,770
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	408,535	(2,309,692)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված վարկեր և փոխառություններ	(252,302)	1,130,000
Վարկերի և փոխառությունների մարում	635,700	(53,279)
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորության մարում	(533,351)	(25,453)
Վճարված տոկոսներ	(377,877)	(223,162)
Շահաբաժինների վճարում	(799,805)	-
Ներդրում կանոնադրական կապիտալում	43,000	-
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,284,635)	828,105
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	569,278	432,658
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	(1,574)	(14)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,187,146	3,754,502
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	4,754,850	4,187,146

10-ից 27-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Գ. Ամիրխանյան

Փորձագետ հաշվապահ
Ն. Յախանեջյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընկերության գործունեության բնույթը

«Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Ընկերությանը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2009թ. Ապրիլի 15-ին: Պետական գրանցման համարն է՝ 278.110.04314

Ընկերության ընթացիկ կառավարումն իրականացվում է գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրենի միջոցով:

Համաձայն կանոնադրության Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է՝

- Շինարարության իրականացում՝
- բնակելի, հասարակական և արտադրական շինությունների
- տրանսպորտային ոլորտում
- հիդրոտեխնիկայի ոլորտում
- էներգետիկայի ոլորտում
- կապի ոլորտում
- Գործառնական վարձակալությամբ տարածքների տրամադրում:

Ընկերության կողմից գործառնական վարձակալությամբ տրամադրված տարածքները իրեն չեն պատկանում, այլ վարձակալված են «Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲԸ-ից և հանձնվում են ենթավարձակալությամբ:

Աշխատողների միջին ցուցակային թիվը հաշվետու տարում կազմել է 180 մարդ, իսկ նախորդ տարում՝ 157:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝

- Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նիկրասովի փողոց, 86 տուն:

Ընկերության ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից կողմից ստացել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» գործունեության անժամկետ լիցենզիա թիվ 14778 համարով:

Ընկերությունը 2019թ ապրիլի 8-ին հաշվառվել է որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ՝ ԾՀ-0325 ծանուցման հաշվառման սերիա-համարով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի դուստր և կախյալ ընկերություններ:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից, և քանի որ, Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում, վերոնշյալ փոփոխություններն ազդեցություն են ունենում Ընկերության վրա:

2021 ֆինանսական տարին հատկորոշվում է որպես վերականգնման շրջան 2020թ. ընթացքում Covid-19 համավարակի և Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անկումից հետո: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ուսումնասիրության համաձայն՝ ներկայումս ընթանում է տնտեսության վերականգնում՝ 2022թ-ին կանխատեսվող 3.5% աճով: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Անորոշ է ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը հայաստանյան գործարար միջավայրի վրա երկարաժամկետ առումով, այն Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների վրա ազդել է տարբեր կերպ: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ այդ հակամարտության հետևանքները չեն ազդի Ընկերության գործունեության վրա բացասական առումով:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար և պարբերաբար վերանայում է Ընկերության իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան

գործիքակազմ, այնուամենայնիվ՝ Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության համար որպես ֆունկցիոնալ և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ), որը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ առանց տասնորդական նիշի հազարների ճշտությամբ:

4. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

4.1 Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

4.2 Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացվում են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերվող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

4.3 Վարձակալություններ

4.9.1 Ընկերությունը՝ որպես վարձակալ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ վերցված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումն, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

4.9.2 Ընկերությունը՝ որպես վարձատու

Ինչպես համադրելի, այնպես էլ հաշվետու տարում Ընկերությունը վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

4.4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:
Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կրոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել : Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է : Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես :

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը : Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին :

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով ՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Շենք, շինություն	20	5.0
Կառուցվածքներ և շինությունների բարելավումներ	20	5.0
Մեքենաներ և սարքավորումներ	8-10	10.0-12.5
Տրանսպորտային միջոցներ	8-10	10.0-12.5
Արտադրական, տնտեսական գույք	8	12.5
Համակարգչային և հաշվողական տեխնիկա	1	100.0
Այլ հիմնական միջոցներ	1-8	12.5-100.0

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում :
Ոչ նյութական ակտիվները գնահատվել են սկզբնական /ձեռք բերման, ներստեղծման/ արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա:
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվեգրվել է գծային արժենվազեցման մեթոդով:
Ոչ նյութական ակտիվների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները:

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Լիցենզիաներ	1-10	10-100.0

4.5 Ներդրումային գույք

Ներդրումային գույք, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և /կամ/ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը : Սկզբնական ճանաճումից հետո ներդրումային գույքը չափվում է ինքնարժեքի մոդելով :

Ներդրումային գույքի մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով ՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում:

Ներդրումային գույքի համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Շենք	20	5.0

4.6 Պաշարներ

Պաշարները չափվել են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:
Պաշարների ելքագրման ժամանակ Ընկերության կողմից օգտագործվել է առաջին մուտք առաջին ելք (ՖԻՖՕ) մեթոդը:

4.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Որպես դրամական միջոցներ են ճանաչվել դրամարկղում առկա կանխիկ դրամը, Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվները (ազգային արժույթով և արտարժույթով) և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների մասին հաշվետվությունը կազմվել է ուղղակի մեթոդով:

4.8 Առևտրային և այլ դեբիտորական ու կրեդիտորական պարտքեր

4.8.1 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:
Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքերի հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Հաշվետու տարում Ընկերությունը դեբիտորական պարտքերի պահուստ չի ձևավորել՝ կասկածելի պարտքերի բացակայության պատճառով:

4.8.2 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով. հետագայում չափվում են ամորտիզված արժեքով:

4.9 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, զեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:

Ընկերությունը ապրանքի վաճառքից հասույթը ճանաչում է այն ժամանակ, երբ հետևյալ բոլոր պայմանները բավարարված են.

1. Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու օգուտները,
2. Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:
3. հասույթի գումարը կարող է չափվել արժանահավատորեն,
4. հավանական է, որ գործարքի հետ ասոցիացված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
5. Գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները կարող են չափվել արժանահավատորեն:

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

1. հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
2. հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
3. հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը
4. հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները

4.10 Արտարժույթի փոխարկումներ և վերագնահատումներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,
- արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանասական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2022	31.12.2021
1 ԱՄՆ դոլար	393.57 ՀՀ դրամ	480.14 ՀՀ դրամ
1 Եվրո	420.06 ՀՀ դրամ	542.61 ՀՀ դրամ
1 ռուբլի	5.59 ՀՀ դրամ	6.42 ՀՀ դրամ

4.11 Արժեզրկում

4.11.1 Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Ընկերությունը դիտարկում է արժեզրկման վկայությունն անհատական և խմբային հիմունքներով:

Բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

4.11.2 Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

4.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես ածանցյալ դեպքերի արդյունք, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը:

4.13 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, '

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձ'ով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրա-վունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, '

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նա' պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

4.14 Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե ընկերությունը ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների,հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրություններչը վերանայվում են:

Անընդհատության սկզբունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Կազմակերպության ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, գործառնությունների շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Կազմակերպության ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում

չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդաբանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն
պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ենթարկվածությունը ռիսկին և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները:

Պարտքային ռիսկի էական աճ. Պարտքային ռիսկի էական աճի փաստման համար Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում դեֆոլտի սկսվելու ռիսկը համեմատում է սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դեֆոլտի սկսվելու ռիսկի հետ: Գնահատման գործընթացը դիտարկում է պարտքային ռիսկի հարաբերական աճը, այլ ոչ թե հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի կոնկրետ մակարդակը:

6. Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Շենքեր և շնություններ	Վարձակալ-ված գույքի բարելավում-ներ	Ֆին. վարձակալութ-յամբ ստացված էքսկավատոր-ներ և ինքնաթափ	Մեքենաներ և սարքավո-րումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Արտադրա-տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք									
Առ 01.01.2022թ.	**44,050**	**4,160**	**294,831**	**38,772**	**115,975**	**78,986**	**66,636**	**53,040**	**696,450**
Գնում	-	-	-	102,756	28,326	61,917	60,739	47,295	**301,033**
Օտարում/դուրս գրում	-	-	-	-	-	-	-	(411)	**(411)**
Առ 31.12. 2022թ.	**44,050**	**4,160**	**294,831**	**141,528**	**144,301**	**140,903**	**127,375**	**99,924**	**997,072**
Մաշվածություն									
Առ 01.01.2022թ.	-	**(1,889)**	**(107,245)**	**(2,254)**	**(68,765)**	**(49,233)**	**(47,867)**	**(21,454)**	**(298,707)**
Հաշվարկ	-	(208)	(14,742)	(11,055)	(15,784)	(23,483)	(16,983)	(36,983)	**(119,238)**
Օտարում	-	-	-	-	-	-	-	268	**268**
Առ 31.12.2022թ.	-	**(2,097)**	**(121,987)**	**(13,309)**	**(84,549)**	**(72,716)**	**(64,850)**	**(58,169)**	**(417,677)**
Հաշվեկշռային արժեք									
Առ 31.12.2021թ.	**44,050**	**2,271**	**187,586**	**36,518**	**47,210**	**29,753**	**18,769**	**31,586**	**397,743**
Առ 31.12.2022թ.	**44,050**	**2,063**	**172,844**	**128,219**	**59,752**	**68,187**	**62,525**	**41,755**	**579,395**

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկվել է 119,238 հազ. դրամի մաշվածություն, որից 88,077 հազ. դրամը ներառվել է շինարարական ծախսումներում, 16,419 հազ. դրամը՝ վարչական ծախսերում, իսկ 14,742 հազար դրամը վերաբերվել է գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցներին և ներառվել է այլ ծախսերում: Համադրելի տարվա ընթացքում հաշվարկվել է 35,909հազ. դրամի մաշվածություն, որից 55,267 հազ. դրամը ներառվել է կատարված շինարարական ծախսումներում, 9,364 հազ. դրամը՝ վարչական ծախսերում, իսկ 14,742 հազար դրամը վերաբերվել է գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցներին և ներառվել է այլ ծախսերում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունն ունի 125,636 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնք հաշվեկշռային արժեքը զրո է:

7. Ներդրումային գույք

	Շենքեր և շինություններ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01.01.2022թ.	225,500	225,500
Գնում	-	-
Օտարում	-	-
Առ 31.12.2022թ.	225,500	225,500
Մաշվածություն		
Առ 01.01.2022թ.	(96,025)	(96,025)
Հաշվարկ	(11,275)	(11,275)
Օտարում	-	-
Առ 31.12.2022թ.	(107,300)	(107,300)
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2022թ.	129,475	129,475
Առ 31.12.2022թ.	118,200	118,200

Ներդրումային գույքի համար հաշվետու և համադրելի տարում հաշվարկվել է 11,275 հազար դրամ մաշվածություն, որն ամբողջությամբ ներառվել է այլ ծախսերում: Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է ակտիվի արժեքի աճի նպատակով պահվող անշարժ գույք:

8. Տրված փոխառություններ և ավանդներ

	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	31.12.2022	31.12.2021	31.12.2022	31.12.2021
Տրված փոխառություններ	3000	3000	2,095,273	1,854,273
Ներդրված բանկային ավանդ	0	0	0	650,000
	3,000	3,000	2,095,273	2,504,273

Տրված փոխառությունների շարժը անվանական արժեքով՝

	2022	2021
Սկզբնական մնացորդ	1,857,273	6,590
Ավելացում	1,353,408	1,987,250
Մարում	-1,112,408	-136,567
Վերջնական մնացորդ	2,098,273	1,857,273

Փոխառություններից 2,007,250 հազար դրամը տրամադրվել է կապակցված կողմերին՝ գրավով չապահովված, անտոկոս և ցպահանջ փոխառության պայմանագրերի հիման վրա: Քանի որ ՀՀ «Քաղաքացիական օրենգրքի» 880-րդ հոդվածին համապատասխան տրամադրված փոխառությունները ցպահանջ են և պայմանագրով սահմանված չէ դրանց մարման գրաֆիկ՝ անտոկոս փոխառությունների գծով հնարավոր չէ կատարել ապագա դրամական հոսքերի արժանահավատ կանխատեսում, ուստի՝ տրված փոխառությունները չեն զեղչվում:

9. Պաշարներ

	31.12.2022	31.12.2021
Վաճառքի համար նախատեսված անավարտ բազմաբնակարան շենք	5,402,388	3,258,982
Վառելանյութ	40,513	-
Այլ պաշարներ	1,323	689
Ընդամենը	5,444,224	3,259,671

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	213,302	247,596
Տրված ընթացիկ կանխավճարներ	607,452	434,752
Այլ դեբիտորական պարտքեր	3,495	871
Ընդամենը	**824,429**	**683,219**

11. Ընթացիկ հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ և պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի

	31.12.2022		31.12.2021	
	Գերավճար	Պարտավորություն	Գերավճար	Պարտավորություն
Ավելացված արժեքի հարկ	155,731	-	47,472	-
Միասնական հաշիվ	22,814	-	-	-
Այլ հարկեր և պարտադիր վճարներ	-	1,435	-	569
Ընդամենը	**178,545**	**1,435**	**47,472**	**569**

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2022	31.12.2021
Ազգային արժույթի դրամարկղ	174,122	57,662
Կառուցապատողի հատուկ հաշիվ ՀՀ դրամով*	4,039,400	3,586,288
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	541,284	543,196
Բանկային հաշիվներ արտարժույթով	44	-
Ընդամենը	**4,754,850**	**3,754,502**

*Ընկերության կողմից կառուցվող բազմաբնակարան շենքերի բնակարանների դիմաց ստացված կանխավճարների մի մասը գտնվում է կառուցապատողի հատուկ հաշվում: Կառուցապատողի հատուկ հաշվում գտնվող գումարները Ընկերության կողմից կարող են օգտագործվել ըստ բազմաբնակարան շենքերի ավարտվածության աստիճանի: Կառուցապատողի հատուկ հաշվի դրական մնացորդի վրա հաշվեգրվում են տոկոսներ (տես՝ծանոթագրություն 26):

13. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է կանոնադրական կապիտալից, չբաշխված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) ֆինանսական արդյունքը:

13.1. Կանոնադրական կապիտալ

Ընկերությունը կանոնադրական կապիտալը կազմում է 43,060,000 /քառասուներեք միլիոն վաթսուն հազար/ ՀՀ դրամ, որից 40 միլիոն ՀՀ դրամը ներդրվել է 2022 թվականի ընթացքում: Ընկերության բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են հետևյալ մասնակիցներին.

Մասնակիցներ	*Բաժնեմասը ՀՀ դրամով*	*Բաժնեմասի տեսակարար կշիռը (%)*
Դավիթ Սեդրակյան	32,295,000	75
Գառնիկ Ավետիսյան	10,765,000	25
Ընդամենը	**43,060,000**	**100**

13.2. Չբաշխված շահույթ և շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվառումը

կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություն ներում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2022 թվականին Ընկերությունը հայտարարել և վճարել է 841,900 հազար դրամի շահաբաժիններ:

14. Վարկեր և փոխառություններ

	31.12.2022	31.12.2021
Երկարաժամկետ բանկային վարկեր	270,212	890,777
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**270,212**	**890,777**
Երարաժամկետ բանկային վարկերի ընթացիկ մաս	2,326,765	1,717,500
Բանկային վարկերի գծով հաշվեգրված ընթացիկ տոկոսներ	14,314	13,751
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**2,341,080**	**1,731,251**
Ընդամենը ընթացիկ և ոչ ընթացիկ վարկեր	**2,611,292**	**2,622,028**

Կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը ստացվել են սեփական և երրորդ անձանց պատկանող գույքերի գրավով ապահովված վարկերից և վարկային գծերի տրամադրումից:

15. Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

	31.12.2022	31.12.2021
Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	74,705	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**74,705**	**-**
Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների ընթացիկ մաս	31,060	21,073
Ֆինանսական վարձակալության գծով հաշվեգրված տոկոսներ	443	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**51,503**	**21,073**
Ընդամենը ֆինանսական վարձակալության գծով ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ	**106,208**	**21,073**

Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններից 55,890 հազար դրամը սահմանված գրաֆիկից շուտ մարվել է 2023թ հունվար ամսին:

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	426,562	290,520
Ստացված կանխավճարներ բնակարանների դիմաց	7,053,083	5,859,933
Ստացված այլ ընթացիկ կանխավճարներ	3,668,095	1,499,128
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	260	4,820
Ընդամենը	**11,148,000**	**7,654,401**

17. Ընթացիկ պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով կարճաժամկետ հատուցումները արձակուրդների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

18. Հասույթ

	- 2022-	- 2021-
Շինարարական աշխատանքների կատարումից հասույթ	4,565,783	2,745,733
Ծառայությունների մատուցումից հասույթ	1,021	3,262
Ընդամենը	**4,566,804**	**2,748,995**

19. Ինքնարժեք

	- 2022-	- 2021-
Կատարված աշխատանքների ինքնարժեք, այդ թվում՝	4,336,672	2,074,053
- Օգտագործված հումք և նյութեր	3,474,799	1,545,349
- Աշխատանքի վճարման և գործուղման ծախսեր	418,086	235,188
- Ստացված ծառայությունների ինքնարժեք	283,806	205,796
- Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգում և սպասարկում	159,981	87,721
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	1,339	2,120
Ընդամենը	**4,338,011**	**2,076,173**

20. Այլ եկամուտներ

	- 2022-	- 2021-
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	41,024	33,851
Այլ պաշարների օտարումից եկամուտներ	7,586	1,483
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	3,815	-
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի հակադարձումից եկամուտներ	-	24,181
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ, այդ թվում՝	-	11,429
- Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	-	13,000
- Վաճառված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք	-	(1,571)
Այլ եկամուտներ	1,996	111
Ընդամենը	**71,055**	**71,055**

21. Իրացման ծախսեր

	- 2022-	- 2021-
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	2,736	4,842
Իրացման այլ ծախսեր	3,356	176
Ընդամենը	**6,092**	**5,018**

22. Վարչական ծախսեր

	- 2022-	- 2021-
Աշխատանքի վճարման ծախսեր	185,986	93,983
Հիմնական միջոցների մաշվածություն	16,834	9,370
Աուդիտորական և հաշվապահական ծախսեր	5,820	5,200
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,847	2,955
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	13,127	12,923
Չփոխհատուցվող հարկերի և տուրքերի գծով ծախսեր	5,060	4,181
Վարչական այլ ծախսեր	619	1,068
Ընդամենը	**230,293**	**129,680**

23. Այլ ծախսեր

	- 2022-	- 2021-
Գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցների ենթավարձակալության գծով ծախսեր	27,184	23,653
Գործառնական վարձակալությամբ տրված գույքի բարելավումների գծով մաշվածություն	14,742	14,742
Գործառնական վարձակալությամբ տրված տարածքների սպասարկման ծախսեր	10,746	14,613
Ներդրումային գույքի մաշվածություն	11,275	11,275
Դեբիտորական պարտքի անհավաքագրելիության պահուստի ծախս	57,781	-
Ծախսեր տույժերից և տուգանքներից	6,724	251
Այլ պաշարների օտարումից ծախսեր	3,668	1,483
Այլ ծախսեր	28,536	15,570
Ընդամենը	**160,656**	**81,587**

24. Ֆինանսական ծախսեր

	- 2022-	- 2021-
Վարկերի գծով տոկոսային ծախսեր	198,219	222,762
ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	7,548	1,120
Ընդամենը	**205,767**	**223,882**

25. Ֆինանսական եկամուտներ

	- 2022-	- 2021-
Բանկային տոկոսներից եկամուտներ	284,886	179,641
Ընդամենը	**284,886**	**179,641**

26. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս

	- 2022-	- 2021-
Վարկերի գծով	117,671	58,940
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով	(33,270)	(868)
Դրամական միջոցների գծով	(1,574)	(14)
Ընդամենը	**82,827**	**58,058**

27. Շահութահարկի գծով ծախս

	-2022-	-2021-
Ընթացիկ հարկի գծով ծախս	(13,319)	(85,214)
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	7,774	2,518
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(5,545)**	**(82,696)**

2022 և 2021 թվականների շահութահարկ հաշվարկելիս ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրառվել է 18% դրույքաչափը:

27.1. Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	2022		2021	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	48,118	100%	541,410	100%
Ընթացիկ շահութահարկ	- 8,661	18%	- 97,454	18%
Չնվազեցվող/(չհարկվող) հոդվածներ	25,876	53.8%	- 67,999	-12.6%
Հարկվող շահույթ	73,994		473,411	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	- 13,319	-27.7%	- 85,214	-15.7%

27.2. Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվներ	31.12.2021	Շահույթում ճանաչված	31.12.2022
Աշխատակիցների կուտակած արձակուրդների պահուստի գծով	4,332	7,774	12,106
Ընդամենը	4,332	7,774	12,106

28. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը և մասնակիցների կողմից վերահսկվող այլ ընկերությունները:

Կապակցված կողմերի միջև կատարված գործարքները հետևյալն են.

28.1. Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն

Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմի կարճաժամկետ հատուցումները ներառյալ հարկերը կազմել են՝

	-2022-	-2021-
Աշխատավարձ և արձակուրդային վճարներ	88,147	23,206

28.2. Գործարքներ մասնակիցների հետ

Տրված փոխառություններ

Մնացորդ առ 01.01.2022թ.	**1,200,000**
Փոխառությունների տրամադրում	801,108
Մարումներ	(681,108)
Մնացորդ առ 31.12.2022թ	**1,320,00**

Ստացված կանխավճարներ

Մնացորդ առ 01.01.2022թ.	**51,752**
Մուտքեր	-
Մարումներ	-
Մնացորդ առ 31.12.2022թ	**51,752**

Դեբիտորական պարտքեր

Մնացորդ առ 01.01.2022թ.	**126,619**
Կատարված աշխատանքներ	-
Մարումներ	(107,121)
Մնացորդ առ 31.12.2022թ	**15,498**

Կրեդիտորական պարտքեր

Մնացորդ առ 01.01.2022թ.	-
Ստացված ծառայություններ	4,320
Վճարումներ	(4,320)
Մնացորդ առ 31.12.2022թ	-

28.3. Գործարքներ կապակցված կազմակերպությունների հետ

Տրված փոխառություններ

Մնացորդ առ 01.01.2022թ.	**602,250**
Փոխառությունների տրամադրում	333,000
Մարումներ	(248,000)
Մնացորդ առ 31.12.2022թ	**687,250**

Ստացված կանխավճարներ

Մնացորդ առ 01.01.2022թ.	**399,090**
Մուտքեր	2,232,639
Մարումներ	-
Մնացորդ առ 31.12.2022թ	**2,631,729**

Դեբիտորական պարտքեր

Մնացորդ առ 01.01.2022թ.	-
Կատարված աշխատանքներ	2,400
Մարումներ	(2,400)
Մնացորդ առ 31.12.2022թ	-

Կրեդիտորական պարտքեր

Մնացորդ առ 01.01.2022թ.	**69,819**
Մատակարարումներ և ստացված ծառայություններ	910,187
Վճարումներ	(896,546)
Մնացորդ առ 31.12.2022թ	**83,461**

29. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Ընկերության համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ կապակցված կողմերին տրված փոխառությունները, բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է անհատական հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը գնահատվել է զրո:

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է

ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և տրված փոխառությունները:

Ստորև ներկայացված է ընկերության ակտիվների իրացվելիության վերլուծությունը

	31.12.2022	31.12.2021
Ընթացիկ ակտիվներ	13,305,675	10,685,327
Ընթացիկ պարտավորություններ	13,589,274	9,488,588
Ընթացիկ իրացվելիության գործակից	**1.0**	**1.1**
Արագ իրացվելի ակտիվներ*	7,861,450	7,425,656
Ընթացիկ պարտավորություններ	13,589,274	9,488,588
Արագ իրացվելիության գործակից	**0.6**	**0.8**
Դրամական միջոցներ և համարժեքներ	4,754,850	4,187,146
Ընթացիկ պարտավորություններ	13,589,274	9,488,588
Բացարձակ իրացվելիության գործակից	**0.3**	**0.4**

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվում են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ պաշարների:

գ) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները ավելի կամ պակաս են նույն արժույթով արտահայտված պարտավորություններից: Ընկերությունում արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը մեծամասամբ առաջանում է արտարժույթով ստացված վարկերից:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը.

	31.12.2022		31.12.2021	
	USD	RUB	USD	RUB
Ֆինանսական ակտիվներ				
-Դրամական միջոցներ	112	0	0	0
Ընդամենը արտարժութային ակտիվներ	**112**	**0**	**0**	**0**
Ֆինանսական պարտավորություններ				
-Բանկային վարկեր	1,114,628	0	1,403,156	0
-Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	126,722	0	0	0
-Կրեդիտորական պարտքեր	1,462	494,502	0	472,500
Ընդամենը արտարժութային պարտավորություններ	**1,242,812**	**494,502**	**1,403,156**	**472,500**
Զուտ արդյունք	**-1,242,700**	**-494,502**	**-1,403,156**	**-472,500**

Ընկերության ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն ըստ արժույթների վկայում է տարեվերջի դրությամբ արտարժույթի ռիսկի ենթարկվածության մասին:

30. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը

և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկ»ությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի երրորդ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված վարկային երաշխավորություններ 43,924,005 հազար ՀՀ դրամ ' 27,095 հազար ԱՄՆ դոլար գումարով, ինչպես նաև ընդհանուր 3,612,782 հազար ՀՀ դրամ գումարի երաշխիքներ:

ե) Գրավադրված ակտիվներ

Ընկ»ությունը ստացված վարկերի դիմաց գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող բոլոր անշարժ գույքերը, ինչպես նաև 38,876 հազար դրամ գնահատված արժեքով էքսկավատոր, 52,500 հազար դրամ սկզբնական արժեքով տրանսպորտային միջոց:

31. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

32. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2023թ հուլիսի 14-ին:

Տնօրեն
Գ.Ավետիսյան

Փորձագետ հաշվապահ
Ն. Յախանեջյան